ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)









2023թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 232,2 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.1%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ նվազելով 7,3%-ով, իսկ 2021 թվականի մարտի 31-ի նկատմամբ՝ 7.8%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 14.3 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 1,1 %-ով, նվազելով 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 7.4%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 7,3%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218.0 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, նվազելով 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.6%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 16.9%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 899,4.մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.5%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 16,5%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 26.0%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 338.1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.5%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 16.4%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 26,7%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 561,4 մլն. ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.8%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 18.5%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 13.5%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 2266.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.3%-ով, 2022թ. մարտիի 31-ի նկատմամբ՝ 24.5%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 31.3%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 747,8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5,9%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 31.2%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 70.1 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 218.0 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով՝ 5.6%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 16,9 %-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 837.0 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.1%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 6.2%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 501,1 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.4%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 64.8%-ով, իսկ 2021թ մարտի 31-ի նկատմամբ՝ 132.4%-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 561.4 մլն, դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1,8%-ով, 2022թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 18,5 %-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 13,5%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 4495.8 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.2 %-ով, աճելով 2022թ.-ի մարտի 31-ի նկատմամբ՝ 0.7%-ով, իսկ 2021թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 1.2%-ով:

2023թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.96%, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.34 տոկոսային կետով, 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից պակաս է 0.32 տոկոսային կետով, 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից ավել է 1.05 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.74%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.34 տոկոսային կետով, 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 0.37 տոկոսային կետով, իսկ 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 0.91 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.3%, ինչը հավասար է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշին, 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից պակաս է 0.14 տոկոսային կետով:

2023թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 37.7 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.45 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.41 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 12.72 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 4.54 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.75 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 24,.98 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.78 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2.16 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2023թ. հունվար-մարտին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 60.3 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 28.43 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 315,93 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 76.29 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 3.1 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 57.79 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -15.99 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 31.53 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 373.72 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-մարտին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 22.16 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 64%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 44.2%-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 52.47 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 0.1 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5.3%-ով,

3) ստացվել են 12.29 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 85.6 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 17.6%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 74.63 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 13.2%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 5.5 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2023թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 577.5 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. մարտի 31-ի և 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 81.2, 285.7 և 597.2 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3018 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 186 օրով, 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 590 օրով, իսկ 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 847 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 6.50%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.21 տոկոսային կետով, 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 1.71 տոկոսային կետով, իսկ 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 2.26 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 2.89%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. մարտի 31-ի և 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար 0.27, 1.73 և 1.85 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 14,52 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 1.47 տոկոսային կետով, 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 4.83 տոկոսային կետով, իսկ 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 7.6 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 82.58%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 1.75 տոկոսային կետով, 2022թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 6.57 տոկոսային կետով, իսկ 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 9.46 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. մարտ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ.մարտի 31-ի դրությամբ կազմել է 7.5 տարի: Այս ցուցանիշը 2022թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.7 տարով, իսկ 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 1.2 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 12.5%, որը 2022թ. մարտի 31-ի և 2021թ. մարտի 31-ի մակարդակներից մեծ է 3,3 տոկոսային կետով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ.մարտի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.8%, լողացող տոկոսադրույքով՝ 16.2%: Ընդ որում, 2023թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. մարտի 31-ի ցուցանիշից ավել է 1.4 տոկոսային կետով, իսկ 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից ավել է 1.8 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 56.5%, ներքին պարտք՝ 43.5%: Ընդ որում, 2023թ.մարտի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ.մարտի 31-ի և 2021թ. մարտի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 12.8 և 19.8 տոկոսային կետերով: